Ռուզվելտ միջին դպրոցի արտակարգ իրավիճակների ընթացակարգի վերաբերյալ հաճախ տրվող հարցեր

1. Ո՞ր արտակարգ իրավիճակների համար ենք փորձեր կատարում Ռուզվելտ միջին դպրոցում:
– Երկրաշարժ, հրդեհ և փականք

2. Դպրոցն ինչպե՞ս կտեղեկացնի ծնողներին արտակարգ իրավիճակների մասին:
– A Blackboard Connect զանգեր կկատարվեն հնարավորին չափ շուտ: Նաև խնդրվում է զանգի հետ կապված էլեկտրոնային նամակները ստուգել:

3. Արդյոք, արտակարգ իրավիճակներում, ծնողը պետք է զանգահարի՞ դպրոց:
– Խնդրվում է գրասենյակ չզանգահարել: Գրասենյակի աշխատակիցները զբաղվելու են աշակերտների ապահովությամբ:

4. Արդյոք, արտակարգ իրավիճակներում, ծնողները պետք է դպրոց գնա՞ն:
– Ոչ: Ձեր երեխան երբեք անուշադրության չի մատնվի և աշակերտները չեն արձակվի մինչև բոլոր աշակերտների և անձնակազմի ներկայությունը չստուգվի:

5. Ինչո՞ւ է կարևոր, որ արտակարգ իրավիճակների քարտի տեղեկությունները արդիականացված լինեն:
– Արտակարգ իրավիճակների քարտը շատ կարևոր է ծնողների և կապի այլ անձանց հետ արտակարգ իրավիճակներում կապվելու համար:

6. Ի՞նչ է «աշակերտին պահանջելու» դարպասը:
– Դարպաս, որտեղ ծնողը/կապի այլ անձիք, արտակարգ իրավիճակներում կարող են դիմել երեխային վերցնելու համար: Այս դարպասը գտնվում է անձնակազմի կայանատեղի հյուսիս արևմտյան կողմում:

7. Ի՞նչ է «աշակերտի վերամիավորման/արձակման» դարպասը:
– Սա այն վայրն է, որտեղ արտակարգ իրավիճակներում, աշակերտները հանձնվում են ծնողներին: Այս դարպասը գտնվում է անձնակազմի կայանատեղի հյուսիս արևելյան կողմում:

8. Արդյոք, արտակարգ իրավիճակներում, աշակերտներն իրավունք կունենա՞ն օգտագործել իրենց բջջային հեռախոսները:
– Դա կախված կլինի արտակարգ իրավիճակների տեսակից: Երբ վարիչները/անձնակազմը կզգան, որ ծնողներին զանգելն անվտանգ է, աշակերտներին կթույլատրվի զանգահարել կարճ ժամանակով՝ սխալ տեղեկությունների տարածումը կանխելու նպատակով:

9. Ի՞նչ պետք է ծնողը ներկայացնի իր երեխային պահանջելու/վերցնելու համար:
– Ինքնությունը հաստատող որևէ բան:

10. Թույլ կտրվի՞ երեխայիս քայլելով տուն գնալ:
– Աշակերտներին, երբեք չի թույլատրվի առանց ծնողի կամ արտակարգ իրավիճակի քարտի վրա նշված անձանց տուն գնալ:

11. Կարո՞ղ է հարևանս/ընկերս իմ երեխային վերցնել դպրոցից:
– Հարևանը կամ ընկերը կարող է երեխային վերցնել միայն այն ժամանակ, եթե նրանց անունը նշված լինի արտակարգ իրավիճակի քարտի վրա:

12. Երկրաշաժի դեպքում, ընտանիքի համար ծրագիր ունե՞ք: Հեռախոսահամարներ. ո՞վ ում պետք է զանգահարի. որտե՞ղ պետք է հանդիպել:

– Սա մի ծրագիր է, որ դուք ընտանիքով պետք է քննարկեք: Որտե՞ղ են ընտանիքի անդամները հանդիպելու: Ո՞վ է երեխաներին վերցնելու: Արդյոք երեխաները գիտե՞ն թե ում անունն է գրված արտակարգ իրավիճակի քարտի վրա: Ընտանիքի անդամները գիտե՞ն էվակուացման ընթացքը:

13. Գիտե՞ք թե ձեր տան գազի և ջուրի փականները որտեղ են:

– Շատ կարևոր է դա իմանալը, քանի որ ձեր և ձեր ընտանիքի ապահովության և գույքի վնասը նվազեցնելու համար, կարող է պետք լինի փակել գազի և ջրի հոսքը:

14. Ի՞նչ պետք է պատրաստ ունենալ արտակարգ իրավիճակի համար:

– Որևէ բանը ոչինչից ավելի լավ է: Ամենաքիչը, դուք պետք է ջուր, առաջին օգնության պայուսակ, պահածո կամ չոր ուտելիք, լապտեր, մարտկոցով աշխատող ռադիո, մարտկոցներ կամ արեգակնային էներգիայի պաշար, պատրաստ մուրճ, լինգ, ծածկոց (tarp), ժապավեն (tape) և այլն ունենաք: Մեքենայի մեջ ևս առաջին օգնության փոքր պայուսակ պահեք: Կարող եք ներառել նույն իրերը, բայց ավելացրեք լատեքս և կաշվե ձեռնոցներ, կոշիկներ և վերմակ: